

ՔՈՒԷԱՐԿՈՂԻ ՈՒՂԵՑՈՅՑ

ԱՅՍ ԱՌԻԹՈՎ, ՔԵՊԷՔԻ ԸՆՏՐԱԿԱՆ ԳԼԽԱԻՈՐ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ ԳՐԱՍԵՆՆԵԱԿԸ ԿԸ ՔՎԵԲԵԿԻ ԳԼԽԱՎՈՐ ԸՆՏՐԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԸ ՏԵՂԵԿԱՑՆՈՒՄ Է ՁԵԶ ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ:

Ո՛Վ ԿՐՆԱՑ ՔՈՒԷԱՐԿԵԼ:

Քուեարկել կարենալու համար, ձեր անունը պետք է գրանցուած ըլլայ ընտրական ցանկին վրայ եւ ընտրութեան օրը ամբողջացուած ըլլաք հետեւեալ պայմանները:

- Ըլլալ 18 տարեկանէն վեր:
- Ունենալ գանատական հպատակութիւն:
- Վերջին վեց ամիսներուն բնակավայր հաստատած ըլլալ Քեպեքի մէջ:

ՁԵՐ ԱՆՈՒՆԸ ԸՆՏՐԱԿԱՆ ՑԱՆԿԻՆ ՎՐԱՑ Է:

Այս մէկը կրնաք հաստատել ստուգելով ձեր հասցէին ուղարկուած մասնակցութեան ծանուցումը:

ԱՅՍ ՄԷԿԸ ԿՐՆԱՔ ՀԱՍՏԱՏԵԼ ՍՏՈՒԳԵԼՈՎ ՁԵՐ ՀԱՍՑԷՐՆ ՈՒՂԱՐԿՈՒՄՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՍՏԱՆՈՒՑՈՒՄԸ:

Պէտք է որ ներկայանաք վերաքննութեան գրասենեակ արձանագրութեան խնդրագիր ներկայացնելու համար եւ կամ ընտրական ցանկին վրայ ճշդումներ կատարելու համար: Ձեր անունով խնդրագիրը կարող են ներկայացնել ձեր կողակիցը, հարազատներ եւ կամ ձեր հետ բնակող ուրիշ անձ:

Ձեր խնդրագրին հետ պէտք է ներկայացնել ինքնութիւն հաստատող երկու փաստաթուղթ, այլապէս խնդրագիրը կը մերժուի:

Առաջին փաստաթուղթ

Առաջին փաստաթուղթը պէտք է կրէ ձեր անունը եւ ծննդեան թուականը:

Օրինակներ՝ Ծննդեան վկայագիր, Քեպեքի առողջապահական ապահովագրութեան քարտ, Կանադական անցագիր:

Երկրորդ փաստաթուղթ

Երկրորդ փաստաթուղթը պարտի ցոյց տալ ձեր անունն ու բնակավայրը:

Օրինակներ՝ Քեպեքի մեքենավարութեան արտօնագիր, հեռաձայնի կամ էլեքտրականութեան հաշուեկիր:

Ո՛ՒՐ ԿԸ ԳՏՆՈՒՐ ԿԵՐԱՔՆՆՈՒԹԵԱՆ ԳՐԱՍԵՆՆԵԱԿԸ:

Վերաքննութեան գրասենեակի հասցէն եւ ժամերը նշուած են ձեր հասցէին ուղարկուած մասնակցութեան ծանուցումին վրայ:

ՅԱՆՈՒՅԵԼԱԸ ՑԱՊԱՂՈՒՄ

Եթէ արձանագրութեան կամ ճշդումի ձեր խնդրագիրը ուզէք ներկայացնել վերաքննութեան յատկացուած ժամանակաշրջանէն ետք, ապա պէտք է կապուիք ձեր շրջանի ընտրական յանձնախումբի պատասխանատուին հետ, որ ձեզ տեղեկ պիտի պահէ վերաքննութեան յատուկ նոր թուականէն եւ վայրէն: Այս ընթացքին, **քուեարկողը անձնապէս միայն** կարող է խնդրագիր ներկայացնել:

ԿԱՐԵՒՐ ՍՏԱՆՈՒՑՈՒՄ: Հատուկ վերանայման ընթացքում Ձեր անվան գրանցումը ընտրացուցակում չի ենթադրում նախնական քվեարկութեանը մասնակցելու Ձեր իրավունքը: **Դուք, սակայն, քվեարկելու իրավունք ունեք ընտրությունները վերահսկող գրասենյակում քվեարկության օրերին և ընտրության օրը:**

ՏՐԲ ԵՒ ՈՐՏԵՂ ՔՈՒԷԱՐԿԵԼ

Քանի մը օր քուեարկութեան մնացած յիշեցումի քարտ մը կ'ստանաք, որ տեղեկութիւն կ'պարունակէ ընտրութեան օրուայ քուեարկութեան մասին: Դուք նաեւ կ'գտնէք ձեր շրջանին թեկնածուներու անունները:

ԱՆԿԱՐՈՂ Է՞Ք ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՕՐԸ ՔՈՒԷԱՐԿԵԼՈՒ. ՔԱՆԻ ՍԸ ԱՅԸ ԸՆՏՐԱՔՆՆԵՐԷ ԿՐՆԱՔ ՕԳՏՈՒԵԼ:

- Կրնաք քուեարկել նախօրոք ընտրութեան կենտրոններում (advance polls): Դիմեցէք ձեր տան հասցէին ուղարկուած ծանուցման, իմանալու թէ որտեղ է վայրը եւ բաց ըլլալու օրերը եւ ժամերը: Դիմեցէք ձեր տան հասցէին ուղարկուած ծանուցման, իմանալու թէ որտեղ է վայրը եւ բաց ըլլալու օրերը եւ ժամերը:

- Կրնաք քուեարկել ընտրական յանձնախումբի նախագահի returning officer գրասենեակին մէջ կամ նշանակուած գրասենեակներէն մէկու մէջ այս նպատակին համար յատկացուած օրերուն: Կրնաք դիմել ընտրական յանձնախումբի նախագահին յաւելալ տեղեկութեան համար կամ այցելեցէք մեր կայքէջը ձեզ համար նկատի առնուած գրասենեակին հասցէն գիտնալու համար:

- Ընտրութեան օրերուն, ժամանակաւոր կերպով ձեր մշտական բնակավայրի ընտրական շրջանէն դուրս բնակուելու պարագային կրնաք քուեարկել ձեր ներկայ ընտրաշրջանին ընտրական յանձնախումբի նախագահին գրասենեակին մէջ, այս նպատակին համար սահմանուած օրերուն: Դուք կը քուեարկէք ձեր մշտական բնակավայրի ընտրաշրջանին պատկանող թեկնածուներէն մէկուն:

- Ժամանակաւոր ընտրական գրասենեակներ կը գտնէք նաեւ Համալսարաններու եւ կոլեճներու մեծամասնութեան մէջ:

ԻՆՉՊԷՍ ՔՈՒԷԱՐԿԵԼ

Առաջին Ընտրական մարմնէն պաշտօնատար մը կը ստուգէ ձեր անունը մասնակցութեան ցանկին վրայ:

Երկրորդ Ձեր ինքնութիւնը կը հաստատէք ներկայացնելով վերոնշեալ փաստաթուղթերէն մէկը:

Երրորդ Ձեզի կը տրուի քուեարկութեան թղթիկը:

Չորրորդ Չորրորդի՝ առանձնապէս քուեարկելի մէջ՝ գաղտնաբար ձեր քուէն տալու համար: Քուեարկութեան թղթիկին վրայ կ'արձանագրէք միմիայն մէկ շրջանակի մէջ գործածելով միայն ձեզի տրամադրուած մատիտը:

Հինգերորդ Կը վերադառնաք սեղան:

Վեցերորդ Ձեր քուէն անձնապէս կը գետեղէք քուեատուփին մէջ:

ԿԱՐԵՒՐ: ՔՈՒԷԱՐԿԵԼ, ԿԱՐԵՆԱԼՈՒ ՀԱՍՏԱՐ ՀԱՐԿ Է ՀԱՍՏԱՏԵԼ ՁԵՐ ԻՆՔՆՈՒԹԻՒՆԸ՝ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՎ ՁԵՏԵՒԵԱԼ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԵՐԷՆ ՄԷԿԸ:

- Քեպեքի առողջապահական ապահովագրութեան քարտ;
- Քեպեքի մեքենավարութեան արտօնագիր;
- Կանադական անցագիր;
- Բնիկ հնդկացու իրավիճակի վկայական;
- Կանադական զինեալ ուժերու ինքնութեան թուղթ:

ԱՐԴԵՕՔ ԿԱՆ ԱՅԸ ՁԵՒԵՐ ՔՈՒԷԱՐԿՈՒԹԵԱՆ ՁԵՐ ԻՐԱՌՈՒՆՔԸ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՍՏԱՐ

Այո, գոյութիւն ունին այլ յատուկ միջոցառումներ ժողովուրդին համար:

- Ժամանակաւոր բացակայութիւն Քեպեքէն;
- Առողջական պարճառով մը անկարող ըլլալ ձեզի մշտական բնակավայրը եւ անձի խնամատուին բնակավայրը նաեւ ըլլալով նոյն շրջանին մէջ:

- Տեղաւորուած կամ մշտականօրէն բնակեցուած հիւանդանոցի մը, երկարատեւ խնամքի բնակարան եւ կեդրոնի մը, ապաքինումի կեդրոնի մը, կամ տարեցներուն յատուկ բնակավայրերու մէջ:

Արդեօք կը ճանչնաք սասնկ կացութեան մէջ եղող անձ մը:

Անմիջապէս տեղեկացրեցէք անոնց, նկատի ունենալով թէ արձանագրութիւնները պիտի ստացուին ընտրութիւններու ժամանակաշրջանի նախնական օրերուն:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

- Այցելեցէք Ընտրական Գլխաւոր Յանձնախումբի կայքէջը՝ www.elections.quebec.
- Կապուեցէք Ընտրական Գլխաւոր Յանձնախումբի Գրասենեակին հետ հեռաձայնելով ձրիաբար **1 888 353-2846** թիւին:.
- Յղեցէք ձեր էլեկտրոնիկ նամակները (Ե-նամակ) Ընտրական Գլխաւոր Յանձնախումբի Գրասենեակին info@electionsquebec.qc.ca.